

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #10

Հոկտեմբեր 2018

Երևան, Հայաստան



Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մենդի վերամշակում.....	3
Տեքստիլ արտադրություն	5
Շինարարություն	8
R&D	10
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	11
Կոսմետիկա.....	13
Առողջապահություն	14
Այլ ոլորտներ	16
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	20
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	22

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մանդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Ֆրանսիական ընկերությունը, որն արտադրում է հատուկ բժշկական նշանակության սննդամթերք և սննդային խառնուրդներ, փնտրում է դիստրիբյուտորներ:

Ֆրանսիական ընկերությունը, որն արտադրում է հատուկ բժշկական նշանակության սննդամթերք և սննդային խառնուրդներ, փնտրում է դիստրիբյուտորներ հատկապես Եվրոպայում (բացի Իտալիայից և Իսպանիայից, որտեղ ընկերությունն ունի դուստր ձեռնարկություններ): Ընկերության նոու-հաուն նախատեսված է բոլոր տարիքի հաճախորդների համար համեղ և առողջարար սննդամթերքի դիզայնի, արտադրության և վաճառքի ապահովմանը:

Ծածկագիր. BOFR20180724001

Օրգանական սնունդ արտադրող ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարածման և առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Ուկրաինական ընկերությունը, որն արտադրում է տարբեր տեսակի օրգանական ապրանքներ, ինչպես օրինակ՝ փաթիլներ, փաթիլների խառնուրդներ, հացահատիկներ և այլուր, հետագա արդյունավետ զարգացման համար փնտրում է արտահանման պոտենցիալ ունեցող գործընկեր: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո երկարատև համագործակցություն հաստատելու նպատակով:

Ծածկագիր. BOUA20180831006

Լեհական ընկերությունը, որը գործում է սննդի ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ ողջ աշխարհում

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է պահածոների և բանջարեղենների մարքեթինգի ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ ողջ աշխարհում՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով: Ընկերության ամենամեծ առավելությունը մրգերի և բանջարեղենների բարձրորակ և բազմազան տեսականին է:

Ծածկագիր. BOPL20180803001

Լեհական ընկերությունը փնտրում է տարածման կամ արտադրական համաձայնագրեր

Լեհական ընկերությունը գործում է սննդի արդյունաբերության ոլորտում և մասնագիտացած է հրուշակեղենի արտադրության ոլորտում. այն արտադրում է՝ ծամոն, կարամել, շոկոլադե և այլ քաղցրավենիք: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով: Ընկերությունը նաև պատրաստ է գործընկերոջը մատակարարել մասնավոր պիտակով արտադրանք՝ արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOPL20180904001

100% բնական հյութեր արտադրող ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարածման և/կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Լատվիական ընկերությունը, որն արտադրում է 100%-անոց բնական հյութ հապալասից, լոռամրգից, արոնիայից, սերկևիլից, կարմիր հապալասից, չիչխանից և խնձորից, փնտրում է գործընկերներ, որոնք ունեն իրենց արտադրանքի կարիքը՝ ուղիղ գնորդներ, ինչպես նաև գործընկերներ սննդի արդյունաբերության, դեղագործական և այլ արդյունաբերական ոլորտներից, որոնք իրենց արտադրական գործընթացներում օգտագործում են բնական հյութեր: Ընկերությունը փնտրում է ուղիղ գնորդներ, դիստրիբյուտորներ և գործակալներ՝ տարածման և/կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOLV20180604001

Գործարար համագործակցության հարցումներ

Ռումինական ընկերությունը փնտրում է չրերի մատակարարներ՝ տարածման համաձայնագրերի ներքո

Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացած է չրերի և սուրճի մեծածախ և մանրածախ վաճառքում, ցանկանում է երկարատև գործընկերություն հաստատել չրերի մատակարարների հետ: Գործընկերությունը կլինի տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRRO20180831001

Թարմ և վերամշակված մսի դիստրիբյուտորը փնտրում է սառեցված միս և տարբեր սառեցված մթերքներ՝ տարածելու համար

Քաթարում գտնվող ընկերությունը, որը շուկայում թարմ և վերամշակված մսի տարածման ոլորտում առաջատարներից է, սերտորեն համագործակցում է իր հաճախորդների հետ, որպեսզի իր ցանցերի ու ծառայությունների միջոցով առավել հայտնի դարձնի իր ապրանքանիշը: Ընկերությունը մանագիտացած է HoReCa ոլորտում և մանրածախ ոլորտում՝ հյուրանոց, սուպերմարկետ, օդանավակայանի ծառայություններ, ավիաընկերություններ, պետական գազալցակայաններ, բարձրակարգ ռեստորաններ և հյուրանոցներ: Ընկերությունը փնտրում է միջազգային մատակարարման ծառայություններ՝ ընդլայնելու համար իր կողմից մատակարարվող ապրանքների շարքը:

Ծածկագիր. BRQA20180916001

Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր

Այս ընկերությունը ստեղծում է 6-12 տարեկան երեխաների համար նախատեսված ուշադրություն գրավող և զուգակցվող հագուստ: Մանկական նորաձև հագուստ արտադրող բուլղարական ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր՝ անկախ գործակալների, մանկական նորաձևության ոլորտի գործակալությունների, խանութների սեփականատերերի և մանրածախ առևտրականների հետ: Ընկերությունը տարին 2 անգամ թողարկում է նոր արտադրական գծի կատալոգ, որն ընգրկվել է Junior Design Awards 2018-ի ցանկում:

Ծածկագիր. OBG20180829001

Իսպանական սպորտային հագուստ արտադրող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և առաջարկում է ենթապայմանագրային համաձայնագրեր

Սպորտային և ջրային մարզատեսակների համար նախատեսված հագուստ արտադրող իսպանական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և ենթապայմանագրային համաձայնագրեր: Ընկերությունն ունի իր արտադրական հնարավորությունները Բարսելոնայում և ունի կարողություններ՝ բավարարելու արտադրական մեծ պահանջարկներ: Ընկերությունը կարող է նաև հանդես գալ իբրև արտադրող ենթակապալառու այլ ապրանքանիշերի համար: Ընկերությունը կարող է հաճախորդի պահանջով նախագծել իր արտադրանքը: Պոտենցիալ գործընկերներ կարող են լինել լողի, եռամարտի, հեծանվավազքի և սպորտային հագուստի ոլորտում գործող ընկերությունները:

Ծածկագիր. BOES20161219001

Բուլղարական ընկերությունը, որն արտադրում է դիզայներական հագուստ, փնտրում է առևտրային գործակալներ և դիստրիբյուտորներ արտերկրում

Բուլղարական ընկերությունը, որը նախագծում և արտադրում է ոճային հագուստ կանանց և տղամարդկանց համար, փնտրում է գործընկերներ (դիստրիբյուտորներ) արտերկրում՝ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOBG20180215001

Ուկրաինական ընկերությունը, որը մասնագիտացած է կանանց և տղամարդկանց համար նախատեսված կաշվե իրերի արտադրության ոլորտում, փնտրում է գործընկերներ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ուկրաինական ընկերությունը, որը մասնագիտացած է բոլոր ժամանակների պահանջներին համապատասխանող բարձրորակ կաշվե իրերի արտադրության մեջ, մասնավորապես՝ ճամպրուկներ, թիկնապայուսակներ, դրամապանակներ և արքեսուարներ, փնտրում է գործընկերներ իր ապրանքանիշով արտադրանքի արտադրության համար՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOUA20180821002

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է հագուստի հավաքածուների հոսքագծերի արտադրության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ:

Լեհական ՓՄՁ-ն պրոֆեսիոնալ փորձ ունի տղամարդկանց և կանանց հագուստի ոլորտում՝ դասակարգումից մինչև դիզայն ու կարուձև, ինչպես նաև փորձ ունի պատրաստի արտադրանքի գովազդի ոլորտում, ունի իր սեփական դիզայներներն ու օնլայն խանութը: Ընկերությունը նաև ունի մոդել աշխատողներ՝ պատրաստի հագուստի ցուցադրության համար: Ընկերությունը փնտրում է գործընկերներ Եվրոպայում՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOPL20180710001

Գործարար համագործակցության հարցումներ

Ռուսական ընկերությունը փնտրում է ֆրանչայզ

Հագուստ արտադրող ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է առաջադեմ տեխնոլոգիաներով պրեմիում դասի ապրանքների արտադրության ոլորտում, փնտրում է հագուստի ապրանքանիշ մշակող և սեփականատեր՝ ապրանքային նշանի արտադրանքը ռուսական ընկերության համար արտադրելու նպատակով և ռուսական շուկայում նման ապրանքների մարքեթինգային առաջխաղացման համար: Ընկերությունը ցանկանում է համագործակցել ֆրանչայզի համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BRRU20171219001

Ռուսական ընկերությունը փնտրում է գործակալություն՝ նոր արտադրական հոսքագծի ստեղծման համար

Ռուսական ընկերությունը, որն արտադրում է վալենկաներ, բրդյա թաթմաններ և գուլպաներ, փնտրում է դիզայներական գործակալություններ՝ նոր արտադրանքի հոսքագծի դիզայնի ստեղծման համար: Ընկերությունը ցանկանում է համագործակցել ծառայությունների համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BRRU20171221032

Շինարարություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Գերմանական ինժեներական ընկերությունը, որը մասնագիտացած է պլաստիկ մասերի համար ներարկման համաձուլվածքների տեխնոլոգիաների ոլորտում, փնտրում է առևտրային գործակալություններ

Գերմանական ինժեներական ընկերությունը գործում է պլաստիկ մասերի համար ներարկման համաձուլվածքների գործիքների և տեխնոլոգիաների նախատիպերի արտադրության ոլորտում, ինչպես նաև զբաղվում է ներարկման համաձուլվածքով պլաստիկ մասերի արտադրությամբ: Քանի որ ընկերությունն արտադրում է ինդիվիդուալ արտադրանք, ուստի այն ցանկանում է համագործակցել առևտրային գործակալների հետ, թիրախային արդյունաբերության ոլորտներում՝ առևտրային գործակալության համաձայնագրեր հաստատելու համար: Ընկերությունը փնտրում է գործընկերներ ողջ աշխարհում:

Ծածկագիր. BODE20180924001

Ուկրաինական ընկերությունը, որը մասնագիտացած է փայտի մշակման բիզնեսում, փնտրում

Է գործընկերներ

Ուկրաինական ընկերությունը, որը գործում է փայտամշակման ոլորտում, փնտրում է համագործակցություն՝ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո: Ընկերության հիմնական գործունեությունը լամինացված և հղկված նրբատախտակի արտադրությունն է: Ընկերությունը փնտրում է երկարատև համագործակցություն առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. [BOUA20180829001](#)

Տարբեր տիպի պողպատյա պարագաներ արտադրող և դիստրիբյուտոր հանդիսացող թուրքական ընկերությունը փնտրում է առևտրային գործակալություններ

Թուրքական ընկերությունը, որը մասնագիտացած է պողպատե պրոֆիլների և ապրանքների արտադրության ոլորտում, ինչպես օրինակ՝ երկար արտադրանք, խողովակային արտադրանք, հումքային կիսաֆաբրիկատներ և հարթ արտադրանքներ, փնտրում է առևտրային գործակալություններ:

Ծածկագիր. [BOTR20161011004](#)

Չեխական ընկերությունը, որը հանդիսանում է ջրի, գազի, ջեռուցման խողովակների և սանիտարական կերամիկայի դիստրիբյուտոր, առաջարկում է իր բիզնեսի ձեռքբերման համաձայնագրեր

Չինական ՓՄՁ-ն մասնավոր սահմանափակ ընկերությունն ունի տարեկան դրական շրջանառության աճ ջրի, գազի, ջեռուցման խողովակների և սանիտարական կերամիկայի ոլորտում: Մեփականատերն արդեն թոշակի տարիքի է և փնտրում է ընկերության ձեռքբերման համաձայնագրեր: Ընկերության հիմնական ակտիվը ձեռք է բերվում արդեն գոյություն ունեցող տարածման ցանցից և ընկերության տարածքներից, ներառյալ՝ պահեստային տարածքներ, գրասենյակներ և ցուցասրահ:

Ծածկագիր. [BOTR20180326002](#)

Բարձրագույն նորարարական ընկերությունը Սլովակիայից, որը գործում է 3D տպիչների մշակման և արտադրության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ, ենթակապալառուներ և ներդրողներ

Բարձր նորարարական ընկերությունը Սլովակիայից, որը գործում է 3D տպիչների մշակման և արտադրության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ իր 3D տպիչների համար: Ընկերությունը փնտրում է նաև ներդրողներ իրենց տեխնոլոգիայում (դա ասելով, ընկերությունը նկատի ունի ֆինանսական համաձայնագրերը):

Քանի որ ընկերությունը գործում է նոր տեխնոլոգիաների ոլորտում, այն կարող է առաջարկել

իր փորձը և նուր-հաուն 3D տպագրության մեջ և 3D տպիչների մշակման ոլորտում՝ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOSK20170131001

Գործարար համագործակցության հարցումներ

Գերմանական ընկերությունը, որը մատակարարում է հիդրավլիկ և օդաճնշական համակարգեր, փնտրում է հիդրավլիկ բալուններ արտադրող, փողրակներ հավաքող, խողովակներ կտող ընկերություններ

Գերմանական ընտանեկան ընկերությունը, որը հանդիսանում է հիդրավլիկ և օդաճնշական համակարգերի ամբողջական տեսականու մատակարար և ծառայությունների մատուցող, ներառյալ՝ փողրակների տեխնոլոգիա, խողովակի և խողովակաշարերի կտում, խողովակաշարերի, շարժիչ բլոկի կառուցում և մոդուլների հավաքում: Ընկերությունն առաջարկում է արտադրական համաձայնագրեր՝ մատակարարելու համար հիդրավլիկ բալուններ, իրականացնելու համար փողրակների հավաքում և խողովակների կտում: Այն նաև առաջարկում է ընկերության ձեռքբերում այն ընկերություններին, որոնք մասնագիտացած են հիդրավլիկ բալունների, փողրակների հավաքման և խողովակների կտման ոլորտներում:

Ծածկագիր. BRDE20180808002

Լեհական ընկերությունը, որն արտադրում է հավաքովի լոգասենյակի խցիկներ, փնտրում է կցամասեր, սալիկներ և աքսեսուարներ արտադրողներ:

Լեհական ընկերությունը, որն արտադրում է հավաքովի սանհանգույցներ և լոգարանի խցիկներ, փնտրում է լոգարանի կցամասեր, պատերի և հատակի սալիկներ և լոգարանի աքսեսուարներ արտադրողներ: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BRPL20180726001

R&D



[Eureka] Կորեական հետազոտական համալսարանը փնտրում է գիտահետազոտական գործընկերներ ALD (ատոմային շերտի տեղադրում) գործընթացների համար պրեկուրատորներ մշակելու նպատակով

Կառավարության կողմից ֆինանսավորվող կորեական հետազոտական համալսարանը պատրաստում է ծրագրի առաջարկ՝ Էուրեկա 2019-ի ներքո: Համատեղ հետազոտության հիմնական նպատակն է ստեղծել բարձրորակ բարակ շերտեր՝ կիրառելով պրեկուրատորներ բարակ ժապավեններով մարտկոցների կամ սմարթ պատուհանային ծրագրերի համար: Այդ իսկ պատճառով, ինստիտուտը փնտրում է գործընկերներ, որոնք մասնագիտացած են ALD (ատոմային շերտի տեղադրում) գործընթացների համար պրեկուրատրային նյութերի մշակմամբ: Նախընտրելի է համագործակցությունը ինչպես քիմիական կամ տեխնոլոգիական ընկերության հետ, այնպես էլ՝ գիտահետազոտական ինստիտուտների հետ:


Ծածկագիր. RDKR20180814001

H2020-DT-NMBP-03-2019: Ընկերություններ և գիտահետազոտական կենտրոններ, որոնք նանո ծածկույթների հետ են առնչվում

Իսպանական հետազոտական կենտրոնը մշակում է H2020-DT-NMBP-03-2019-ի առաջարկ, որի նպատակն է տրամադրել ծառայություններ նանո-նախագծման և նանո-ակտիվ մակերևույթների փորձարկման հետ կապված: Որոնվող գործընկերները պետք է լինեն ընկերություններ կամ գիտահետազոտական կենտրոններ տարբեր ոլորտներից, որոնք հետաքրքրված են նոր ֆունկցիոնալ հատկություններ տրամադրել իրենց ապրանքներին, ինչպես նաև՝ որակավորված մասնագետներ և ստանդատիզացում և կարգավորումներ:

Ծածկագիր. RDES20180917001

Տեղեկատվական տեխնոլոգիաներ



Գործարար համագործակցության առաջարկներ

Սլովակյան S2S ընկերությունն առաջարկում է հավելված՝ հաշիվների էլեկտրոնային մշակման համար և փնտրում է գործընկերներ՝ տարածման կամ ծառայությունների մատուցման համաձայնագրերի ներքո համագործակցելու համար :

Սլովակյան ընկերությունը, որը մասնագիտացած է տվյալների համակարգերի SS լուծումներում, մշակել է հավելված, որն օգնում է էլեկտրոնային մշակել հաշիվները: Համակարգը հնարավորություն է տալիս օգտատերերին ստանալ էլեկտրոնային հաշիվները էլեկտրոնային հասցեով: Հաշիվները ստորագրված են էլեկտրոնային ստորագրությամբ, և հաշիվ-ապրանքագրերի անդորրագիրը լիազորված է. հաշիվներ կարելի է ստանալ միայն նախապես սահմանված մատակարարներից: Սլովակյան ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարածման կամ ծառայությունների մատուցման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOSK20161207001

Ծրագրեր մշակող ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ առևտրային գործակալության համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով կամ՝ համաձայնագրեր վերավաճառողների հետ:

Մալթական ընկերությունը, որը մասնագիտացած է պատվիրված վճարումների ուղեմուտերի մշակման ոլորտում, փնտրում է գործընկերներ՝ օնլայն մանրածախ առևտրականներ, ավիացիոն օպերատորներ, իսադային, ապահովագրական ընկերություններ, հիվանդանոցներ, տոմսերի վաճառքով զբաղվող և ֆորեքս ընկերություններ՝ իր վճարումների ուղեմուտերը առևտրային գործակալության համաձայնագրերի կամ վերավաճառողների հետ համաձայնագրերի ներքո վաճառելու նպատակով:

Ծածկագիր. BOMT20180920001

Առաջարկվում է անգլերեն լեզվի նորարարական առցանց տեխնոլոգիա բիզնեսների, կառավարությունների և կրթական հաստատությունների համար լիցենզիոն կամ ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո:

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որը հանդիսանում է անգլերեն լեզվի տեխնոլոգիայի մատակարար, աջակցում է բիզնեսներին և կրթություն տրամադրողներին ստեղծել և գործի դնել պատվերով արված առցանց անգլերեն լեզվի դասընթացի/ուսուցման լուծումներ:

Ընկերությունը փնտրում է առևտրային համագործակցություն ՓՄՁ-ների/կազմակերպությունների հետ, որոնք հետաքրքրված են կիրառել պատվերով արված ծրագրեր՝ նպատակ ունենալով բարելավել լեզվական ունակությունները:

Համագործակցությունը կլինի լիցենզիոն կամ ծառայությունների մատուցման համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOUK20180712001

Գործարար համագործակցության հարցումներ

Ծրագրեր մշակող ընկերությունը փնտրում է գործընկերներ աութօրսինգային կամ ծառայությունների մատուցման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Գերմանական ՓՄՁ-ն, որը գործում է շարժական արդյունաբերական ծրագրերի հավելվածների մշակման ոլորտում, թվայնացման լուծումների և աշխատանքային գործընթացների օպտիմալացման գործընթացում, փնտրում է գործընկերներ՝ աութօրսինգային կամ ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով: Այժմ ընկերությունը գործում է գերմանական և եվրոպական շուկաներում և ցանկանում է ընդլայնվել այլ երկրներում:

Ծածկագիր. BRDE20180823001

Կոսմետիկա



Business Support on Your Doorstep

Գործարար համագործակցության առաջարկներ

Կոսմետիկա արտադրող բելգիական ընկերությունը փնտրում է արտադրական համաձայնագրեր ողջ աշխարհում

Կոսմետիկա արտադրող բելգիական ընկերությունը, որն արտադրում է մասնավոր պիտակներով, փնտրում է արտադրական համաձայնագրեր: Ընկերությունը կարող է նաև աջակցել ապրանքի մշակման հարցում, քանի որ ընկերությունն ունի հնարավորություն և կարողություն մշակման և արտադրական գործընթացի բոլոր փուլերի համար:

Ծածկագիր. BOBE20180913001

Ֆրանսիական ընկերությունը, որն արտադրում է նորարարական փրփրային օձանելիք, փնտրում է դիստրիբյուտորներ

Ֆրանսիական ընկերությունը կոսմետիկայի ոլորտից մշակել և արդեն արտադրում է մի շարք նորարարական «օձանելիքի փրփուրներ»՝ խոնավացնող միջոցի և օձանելիքի խառնուրդ: Իր վիտրաժային/ռետրո մարկետինգով այն նախատեսված է միլենիումի մարդկանց համար: Ընկերությունն արդեն վաճառում է իր արտադրանքն արտերկրում և ցանկանում է ընդլայնվել եվրոպական և այլ շուկաներում՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու միջոցով:

Ծածկագիր. BOFR20180716002

Ալոե վերայի վրա հիմնված կոսմետիկ ապրանքներ արտադրողը փնտրում է գործընկերներ

Պորտուգալական ընկերությունը, որը մասնագիտացած է ալոե վերայի վրա հիմնված կոսմետիկ ապրանքների արտադրության ոլորտում, ինչպես օրինակ՝ մաշկի խնամք, մարմնի խնամք, մազերի խնամք և պաշտպանություն արևից, ցանկանում է բարձրացնել իր վաճառքի ծավալները այլ երկրներում: Այդ իսկ պատճառով, այն փնտրում է այլ ընկերություններ՝ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրեր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BOPT20170914001

Առողջապահություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ, գործակալներ, ներկայացուցիչներ՝ բարձրորակ պատրաստի դեղագործական արտադրանքի համար

Իսրայելյան ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է բարձրորակ գեներիկ ապրանքների արտադրության ոլորտում, առաջարկում է պատրաստի դեղագործական ապրանքների բազմազան տեսականի: Ապրանքները կարող են կիրառվել պարբերական բուժման ընթացքում: Շուկայում եղած առավելությունները ներառում են՝ ապրանքների հարմարեցում հաճախորդի կարիքներին, վերջնական ապրանքների բարձր որակ: Համագործակցությունը հնարավոր է առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOIL20170713001

Լեհական գիտահետազոտական ընկերությունը, որն արտադրում է նիկելից առաջացող ալերգիայի դեմ նախատեսված կոսմետիկա, փնտրում է դիստրիբյուտորներ

Լեհական հետազոտող և մշակող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ կոսմետիկայի համար, որը նախատեսված է մաշկը նիկելից առաջացող ալերգիայից պաշտպանելու համար: Ընկերության սեփական բեկումնային տեխնոլոգիան ապահովում է ակտիվ նյութերի մաքսիմալ խտություն, որն օգնում է պաշտպանել մաշկը: Ընկերությունը փնտրում է փորձառու դիստրիբյուտորների, ովքեր նաև փորձ ունեն մաշկի խնամքի և ընդհանրապես կոսմետիկ խնամքի ոլորտներում:

Ծածկագիր. BOPL20170920003

Բարձրորակ առողջարար սննդային հավելումների, մաշկի համար նախատեսված կոսմետիկայի և բժշկական սարքավորումների համար ընկերությունը փնտրում է դիստրիբյուտոր գործընկերներ

Իտալական կենսաբժշկական և դեղագործական ընկերությունը, որը մասնագիտացած է առաջադեմ սննդային հավելումների և մաշկի համար նախատեսված ապրանքների արտադրության մեջ, որոնք ունեն տարբեր ապրանքային հոսքագծեր (ֆլեբոլոգիա, գինեկոլոգիա, լիմֆոլոգիա, ընդհանուր բժշկություն, օրթոպեդիա, ուռուլոգիա, մաշկի մաքրող միջոցներ), փնտրում է օտարերկրյա գործընկերներ, ովքեր հետաքրքրված են ծառայությունների մատուցման համաձայնագրերի ներքո համագործակցությամբ:

Ծածկագիր. BOIT20180508001

Գործարար համագործակցության հարցումներ

Թայվանյան ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության համաձայնագրեր

Թայվանյան ընկերությունը, որը տրամադրում է առողջապահական ծառայություններ, փնտրում է հետևյալ ապրանքների՝ թթվածնի կոնցենտրատների, խոնավության ասպիրատորների, հեղուկացրիչների, հետվիրահատական և պաշտպանիչ պարագաների եվրոպական մատակարար կամ արտադրող: Ընկերությունը նպատակ ունի ընդլայնել իր արտադրանքը: Այն ցանկանում է աշխատել լավ հաստատված գործընկերների հետ՝ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRTW20170822001

Այլ ոլորտներ



Business Support on Your Doorstep

Գործարար համագործակցության առաջարկներ

Իսպանական ՓՄՁ-ն առաջարկում է բնական լուծումներ առանց քիմիկատների մնացորդների մրգերի և բանջարեղենների աճեցման համար և փնտրում է դիստրիբյուտորներ ողջ աշխարհում

Իսպանական ընկերությունը գործում է բնական պարարտանյութերի, թունաքիմիկատների և ֆունգիցիդների մշակման, արտադրության և մարքեթինգի ոլորտում և տրամադրում է տեխնիկական խորհրդատվություն գյուղատնտեսության մեջ՝ օրգանական և զրոյական քիմիական մնացորդային լուծումների համար, ինչը նպաստում է կայուն միջավայրի պահպանմանը և մարդու համար առողջ սննդի ստեղծմանը: Ընկերությունը փնտրում է

դիստրիբյուտորներ ողջ աշխարհում:

Ծածկագիր. BOES20180927001

Հարավային Կորեայում գտնվող արտադրողը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր

Ընկերությունը Հարավային Կորեայից արտադրում է հանգստի համար նախատեսված սպորտային պարագաներ, ինչպես օրինակ՝ փչովի նավակներ, փչովի համակարգեր, փչովի թիավարվող նավակներ, ջրասուզակի խողովակներ և լաստանավեր: Ընկերությունը հիմնադրվել է 1992 թվականին և արդեն մատակարարել է իր արտադրանքը 78 երկրների 28 պատվիրատուների: Արտերկրյա շուկայում առավել ամուր հիմքեր ստեղծելու համար, ընկերությունը փնտրում է եվրոպական գործընկերներ, ովքեր հետաքրքրված են տարածման ծառայությունների համաձայնագրերով:

Ծածկագիր. BOKR20170918002

Ընկերությունը, որը նախագծում և մշակում է խորված պատրաստելու սարքավորում, փնտրում է եվրոպական օնլայն վերավաճառողներ՝ իրենց հայտնի արտադրանքը վաճառելու և տարածելու նպատակով:

Միացյալ Թագավորությունում միակ մասնագետը խորված պատրաստելու սարքավորման ոլորտում, փնտրում է գործընկերներ, ովքեր կարող են օնլայն վաճառել այդ արտադրանքն իրենց երկրներում: Ընկերությունը հանդիսանում է նորարարության առաջատարը՝ արտադրանքի էքսկլյուզիվ տեսկանիում, և մի շարք արքեսուարների նախագծման իրավունքն իրեն է պատկանում: Իդեալական գործընկեր կարող է լինել կենցաղային և այգու համար նախատեսված պարագաների օնլայն վաճառողը, և իր տեսականին ընդլայնել ցանկացող ընկերությունը:

Ծածկագիր. BOUK20171016001

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է կրթական ծառայությունների ոլորտում, փնտրում է գործընկերներ արտերկրում ծառայությունների մատուցման համաձայնագրերի ներքո

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է կրթական ծառայությունների մատուցման ոլորտում՝ ֆինանսական կառավարում և միջազգային ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ, արտերկրում փնտրում է առևտրային գործընկերներ՝ ծառայությունների մատուցման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BORU20170802002

Կոշտ կահույք և մասեր արտադրող լիտվական ընկերությունն առաջարկում է արտադրական

Ճառայություններ և/կամ ենթապայմանագրային համագործակցություն

Լիտվական ընկերությունը, որը մասնագիտացած է կոշտ կահույքի և դրա մասերի արտադրության ոլորտում, առաջարկում է ապրանքների լայն տեսականի: Այն ներառում է կոշտ կահույք փոքր և միջին սերիաներով, փայտե հիմքով տախտակների հիմքով (խոհանոց, պահարան, լոգախցիկներ, սեղաններ) և առանձին մասեր ու դետալներ կահույքի համար: Ընկերությունն առաջարկում է համագործակցել կահույք արտադրող, ինտերիերի դիզայնով զբաղվող, անշարժ գույքի ոլորտում գործող ընկերությունների հետ արտադրական և/կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOLT20180528002

Կահույքի լուծումներ և o-led լամպեր են առաջարկվում իտալական ընկերության կողմից

Իտալական ընկերությունը, որը մասնագիտացած է լուսավորման և պատվերով արվող կահույքի լուծումներում, ցանկանում է համագործակցել օտարերկրյա ընկերության հետ ծառայությունների մատուցման կամ արտադրական համաձայնագրերի ներքո՝ դիստրիբյուտորների, մեծածախ առևտրով զբաղվողների, ճարտարապետական կամ դիզայներական ստուդիաների հետ: Գործընկերները կարող են լինել ցանկացած երկրից:

Ծածկագիր. BOIT20170913001

Ընկերությունը, որը մասնագիտացած է բջջային արքեսուարների արտադրության ոլորտում, փնտրում է եվրոպական գործընկերներ՝ առևտրային գործակալության համաձայնագրերի և տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ընկերությունը Հարավային Կորեայից, որը հիմնադրվել է 2015 թվականին, մշակել է բջջային արքեսուարներ սմարթֆոնների համար, ինչպես օրինակ՝ էկրանի պաշտպանիչներ և պատյաններ: Ընկերությունն այժմ ցանկանում է առավել ընդլայնել իր շուկան եվրոպական տարածաշրջանում և փնտրում է առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BOKR20170726001

Գործարար համագործակցության հարցումներ

Դիզայները Միացյալ Թագավորությունից փնտրում է բորոսիլիկատից ապակի

Լոնդոնյան մրցանակակիր ընկերությունը փնտրում է բորոսիլիկատ՝ իրենց քանդակային գինու գրաֆիկի և բաժակների արտադրության համար: Ընկերությունը ցանկանում է ստորագրել արտադրական համաձայնագրեր բորոսիլիկատից ապակու փորձառու

արտադրողի հետ:

Ծածկագիր. BRUK20180417001

Ֆրանսիական ընկերությունը փնտրում է դեկորատիվ իրեր՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Ֆրանսիական ընկերությունը, որը հանդիսանում է միջոցառումների և ուրախ տոների համար նախատեսված տոնական պարագաների ներմուծող, հետաքրքրված է արտադրական համաձայնագրերի կնքմամբ՝ ապակուց, կտորից, թղթից, փայտից կամ պոլիէսթերից այդ պարագաներն արտադրողների հետ:


Ծածկագիր. BRFR20180316001

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից առաջարկում է տարածման կամ առևտրային ծառայություններ

Նոր ընկերությունը Միացյալ Թագավորությունից փնտրում է շինարարության համար նորարարական և էկոլոգիական ապրանքներ ինտերիերի և էքստերիերի հարդարանքի նյութերի, ապրանքների և ծառայությունների մատուցման ոլորտներից՝ դրանք բրիտանական շուկայում տարածելու նպատակով: Ընկերությունը կարող է հանդես գալ իբրև դիստրիբյուտոր կամ առևտրային ներկայացուցիչ (գործակալ) Միացյալ Թագավորությունում՝ համագործակցելով տարածման կամ առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRUK20180323001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Մեքենայացված ուսուցման տեխնոլոգիա Google Ads-ի գովազդների ավտոմատացված օպտիմալացման համար

Իսպանական սկսնակ ընկերությունը մշակել է մեքենայացված ուսուցման տեխնոլոգիա Google Ads-ի գովազդների ավտոմատացված օպտիմալացման համար: Այն հիմնված է արհեստական ինտելեկտի և NLP-ի (բնական լեզվի մշակում) վրա Google Ads-ի նպատակային թիրախավորման համար, ինչը նշանակում է գործընթացի ավտոմատացում, որը մինչ այդ եղել է մեխանիկական: Ընկերությունը փնտրում է տեխնիկական աջակցությամբ առևտրային գործակալության համաձայնագրեր:

Ծածկագիր. TOES20180921001

Ունիվերսալ հզոր ձգողականությամբ մարտկոցային միավոր

Չեխական համալսարանը մշակել է ունիվերսալ հզոր ձգողականությամբ մարտկոցային միավոր, ինչը վտանգավոր միջավայրում, որտեղ առկա է մեթանի և/կամ ածխի փոշու պայթյունի վտանգ, ապահովում է հուսալի և անվտանգ գործարկում: Համալսարանը լիցենզային կամ հետազոտական համաձայնագրերի ներքո փնտրում է արդյունաբերական գործընկերներ, ովքեր կարող են կիրառել այս միավորը:

Ծածկագիր. TOCZ20180904006

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

Փոքր իտալական ընկերությունը կահույքի ոլորտից, փնտրում է տեխնիկական

փորձաքննություն և նոու-հաու պլաստիկ նյութերի ոլորտում

Իտալական ընկերությունը, որը գործում է կահավորման և արտադրության ոլորտում և ժամանակակից նստատեղերի և կահավորման դիզայնի ու մշակման համար ունի կարողություններ, փնտրում է գործընկեր, որոնք պլաստիկ իրերի համար կառաջարկեն նոու/հաու լուծումներ: Ընկերությունը նպատակ ունի ընդլայնել իր արտադրությունը՝ համագործակցելով գիտահետազոտական կենտրոնների կամ արտադրողների հետ, ովքեր փորձ ունեն նորարարական, էկո-կայուն, ունիվերսալ պլաստիկ արտադրանքի մշակման ոլորտում: Համագործակցությունը հնարավոր է տեխնիկական համագործակցության կամ արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. TRIT20180920001

Իսպանիայի քաղաքային խորհուրդը փնտրում է սմարթ շարժական լուծումներ՝ հետազոտական, տեխնիկական կամ առևտրային համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Իսպանիայի քաղաքային խորհուրդը նպատակադրված է առաջ ընթանալ կայուն և սմարթ շարժական լուծումներում: Այդ իսկ պատճառով, քաղաքային խորհուրդը փնտրում է քաղաքային, կայուն և սմարթ (էկո) շարժական նախաձեռնություններ, համաձայնագրեր կամ համագործակցություն, ուր նորարարությունն առաջնորդում է և միաժամանակ հանդիպում է սոցիալական մարտահրավերների: Այն առաջարկում է բաց նորարարական էկոհամակարգ, ստեղծում է կենդանի լաբորատորիա, որոնք օգտագործվում են նորարարական գործընթացին արժեք ավելացնելու նպատակով: Նրանք որոնում են հետազոտական, տեխնիկական կամ առևտրային համագործակցություն:

Ծածկագիր. TRES20180926001

Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2018 թ. -ի նոյեմբեր, դեկտեմբեր ամսիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

Նոյեմբեր

12/11/2018	<p>Healthcare Brokerage Event at MEDICA 2018</p> <p>Դյուսելդորֆ (Գերմանիա)</p> <p>Այս միջոցառման նպատակն է աջակցել ձեռնարկություններին, համալսարաններին և հետազոտական ինստիտուտներին գտնելու գործընկերներ Եվրոպայում՝ բիզնես համագործակցության, ապրանքների մշակման, արտադրության և լիցենզավորման համաձայնագրերի, համատեղ ձեռնարկության և այլ տիպի համագործակցության նպատակով:</p> <p>http://www.medica-tradefair.com/</p>
------------	--

29/11/2018	<p>Matchmaking event during the International textile conference 2018</p> <p>Ասիսեն (Գերմանիա)</p> <p>Երկօրյա միջոցառման ընթացքում մասնակիցները հնարավորություն կունենան ծանոթանալու ոլորտի վերջին զարգացումներին՝ մասնակցելով լիազումար նիստերին, դասախոսություններին և հատուկ սիմպոզիումներին, ինչպես նաև հնարավորություն կունենան հանդիպել պոտենցիալ գործընկերներին B2B հանդիպումների ժամանակ, որոնք կազմակերպված են NRW.International GmbH-ի կողմից:</p> <p>https://additc2018.b2match.io/</p>
------------	---

Դեկտեմբեր

04/12/2018	<p>Face2Face Meetings @ H2020 ICT Conference</p> <p>Ավստրիա (Վիեննա)</p> <p>Այս ցանցային միջոցառումը S2S ոլորտի ներկայացուցիչների համար եզակի հնարավորություն է: Ընկերությունների, համալսարանների և հետազոտական ինստիտուտների S2S ոլորտի ներկայացուցիչները ողջ աշխարհից հրավիրվում են մասնակցելու այս միջոցառմանը, որի ընթացքում մասնակիցները ոչ միայն կփոխանակվեն ծրագրին վերաբերող մտքերով, այլ նաև ձեռք կբերեն գործընկերներ:</p> <p>https://www.acv.at</p>
13/12/2018	<p>BIOREGATE FORUM - one-to-one meetings</p> <p>Երկու տարին մեկ անգամ իրականացվող այս ֆորումը նվիրված է բջջային և գենային թերապիայի, ցողունային բջիջների, բիոմետրատների և հյուսվածքների ճարտարագիտության ոլորտում վերջին գիտական, տեխնոլոգիական, կլինիկական և առևտրայնացմանն ուղղված մոտեցումների լուսաբանմանը:</p> <p>http://www.bioregate.com/bioregate-forum-european-regenerative-medicine-forum-2018-edition/</p>

14/12/2018	<p>Conferences & Brokerage Event: "Medical data valorisation and sustainability"</p> <p>Luxembourg (Esch-sur-Alzette)</p> <p>Միջոցառումը հրավիրում է ակադեմիայի, բիոտեխնոլոգիական և դեղագործական ընկերությունների, հետազոտական ենթակառուցվածքների, բուժաշխատողների, ինչպես նաև հիվանդների ներկայացուցիչների և այդ ոլորտի քաղաքականությունը մշակողների:</p>
------------	--

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁեՑ Հայաստան:

Նշում: *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Custom/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալության, Եվրոպական Հանձնաժողովի կամ այլ եվրոպական կառույցների տեսակետը: Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալությունը, Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող բովանդակությունն օգտագործվելու դեպքում: